ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՄ- ԲԸԱՀ- ԱՇՁԲ - 11/05/01

ք. Աշտարակի « 12 » մայիսի 2011 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից, և **«ԵՍ ԵՎ ՆԱ»ՍՊԸ-ն** դեմս Ընկերության տնօրեն Նաիրի Սահակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Արագածոտնի մարզի **գ.Գեղաձորի 3-րդ աստիճանի վնասվածության դպրոցական շենքի հիմնանորոգման** շինարարության աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2011թ. նոյեմբերի 30-ը:**

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ Հավելված N2: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

3.4.10 Աշխատանքը հանձնելուց հետո՝ 3 (երեք) տարվա ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար սույն պայմանագրով վճարված գնի այն մասը, որը կազմում է թերություններն ամբողջությամբ վերացնելու համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարը կամ հատուցել Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացված, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 4 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-

ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է_____**102 892 900_ (մեկ հարյուր երկու միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր_)** ՀՀ դրամ, որից **_17 148 817 (տասնյոթ միլիոն հարյուր քառասունութ հազար ութ հարյուր տասնյոթ)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնի՝ **____20____ տոկոսը 20 578 580 (քսան միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամը,** Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված աշխատանքների ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանգրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2. Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, **սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2011թ.,** պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկախիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին,) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի,) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն,) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.6 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը: Ընդ որում, շուկայական գին է համարվում պետության կարիքների համար նմանատիպ աշխատանքների ձեռքբերման փաստացի նվազագույն գինը:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Արագածոտի մարզպետարան	«ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4	ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11
Աշտարակիի ՏԳԲ	< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ
հ/հ 900441041226 ՀՎՀՀ 05400424	հ/հ 22004333127000 ՀՎՀՀ 05204081
Ս. Սահակյան _____	Ն.Սահակյան_____
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 3
«12» մայիսի 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N ԱՄ- ԲԸԱՀ - ԱՇՁԲ - 11/05/01 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N ը/կ	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2011թ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում								
		մայիս	հունիս	հուլիս	Օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
1.	ՀՀ Արագածոտնի մարզի գ.Գեղաձորի 3-րդ աստիճանի վնասվածության դպրոցական շենքի հիմնանորոգման աշխատանքներ	40 628 500.0	40 628 500.0	92 515 500.0	92 515 500.0	92 515 500.0	102 892 900.0	102 892 900.0	102 892 900.0	**102 892 900.0**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .

Աշտարակիի ՏԳԲ

հ/հ 900441041226 ՀՎՀՀ 03400424[illegible]

Ս. Սահակյան _____

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ

հ/հ 220043331127000 ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան_____

Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 12 >> մայիսի 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N ԱՄ- ԲՀԱՀ- ԱՇՁԲ - 11/05/01 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արագածոտնի մարզի գ.Գեղաձորի 3-րդ աստիճանի վնասվածության դպրոցական շենքի հիմնանորոգման _
շինարարության աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Արագածոտնի մարզի գ.Գեղաձորի 3-րդ աստիճանի վնասվածության դպրոցական շենքի հիմնանորոգման աշխատանքներ	**102 892 900.0**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	30.11.2011թ.
2				
3				
4				
5				
6				
ԸՆԴԱՄԵՆԸ		**102 892 900.0**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .

Աշտարակիի ՏԳԲ

h/h 900441041226 ՀՎՀՀ 05400424[illegible]

Ս. Սահակյան _____

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ

h/h 220043331127000 ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան_____

Կ.Տ

Հավելված թիվ 4
<<_____>> մայիսի 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N N ԱՄ- ԲԸԱՀ- ԱՇՁԲ - 11/05/01 *գնման պայմանագրի*

Կապալառու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

Պատվիրատու

_____
_____
_____
հասցե_____
հհ_____
_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 2011թ.

Պայմանագրի անվանումը՝ ----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 2011թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կապալառուն՝ ի դեմս , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<___>> <<_____>> 2011թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N___ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և օրացուցային գրաֆիկին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն <<_____>> <<_____>> 2011թ–ից <<_____>> <<_____>> 2011թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները .

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____

Կ Տ

Աշխատանքը ընդունեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____

Կ Տ

Հավելված թիվ 1
<< >> մայիսի 2011թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ N N ԱՄ- ԲԸԱՀ- ԱՇՁԲ - 11/05/01 *գնման պայմանագրի*

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

<< Արագածոտնի մարզի Գեղաձորի 3-րդ աստիճանի վնասվածության դպրոցական շենքի ուժեղացում, վերականգնում

<N<	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	Ի. Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Ուժեղացման աշխատանքներ-Մասնաշենք Ա				
1	Փայտե հատակների քանդում	մ^2	60.00	1,0	60,0
2	Գրունտի քանդում մինչև հիմքի վերին շուրթի մերկացումը	մ^3	6.50	4,0	26,0
3	Գրունտի հետեդարձ լիցքի, ձեռքով	մ^3	6.50	2,0	13,0
4	Փայտյա հատակի կառուցում օգտագործելով հին փայտանյութը	մ^2	60.00	3,0	180,0
5	Ծածկից g/ավազային հարթեցնող շերտի քանդում	մ^3	18.00	10,0	180,0
6	Անցքերի շաղափում	մ^3	0.20	10,0	2,0
7	Միջնորմների քանդում սղոցումով(սյան և միջնորմի միջև ճեղքի առաջացման համար)	մ^3	3.50	20,0	70,0
8	Սյուների ուժեղացում տորկրոտ շաղախով 50մմ հաստության	մ^2	151.20	4,0	604,8
9	Մետաղական տարրերի տեղադրում	տ	5.946	50,0	297,3
10	75x75x8 մետաղական անկյունակի արժեքը	մ	567.84	3,5	1987,4
11	Շերտապողպատի արժեքը 60x80x260	կգ	0.82	0,4	0,3
12	Ծածկի բետոնացում B15 դասի բետոնով	մ^3	38.00	45,0	1710,0
13	Ամրան Acl	կգ	172.80	0,4	69,1
14	Ամրան 4Bp-I	կգ	520.00		

Ուժեղացման աշխատանքներ-Մասնաշենք Բ					
15	Փայտե հատակների քանդում	մ^2	60.00	1,0	60,0
16	Գրունտի քանդում մինչև հիմքի վերին շուրթի մերկացումը	մ^3	6.50	4,0	26,0
17	Գրունտի հետեդարձ լիցքի, ձեռքով	մ^3	6.50	2,0	13,0
18	Փայտյա հատակի կառուցում օգտագործելով հին փայտանյութը	մ^2	60.00	3,0	180,0
19	Ծածկից ց/ավազային հարթեցնող շերտի քանդում	մ^3	18.00	10,0	180,0
20	Անցքերի շաղափում	մ^3	0.20	10,0	2,0
21	Միջնորմների քանդում սղոցումով(սյան և միջնորմի միջև ճեղքի առաջացման համար)	մ^3	3.50	20,0	70,0
22	Սյուների ուժեղացում տորկրոտ շաղախով 50մմ հաստության	մ^2	151.20	4,0	604,8
23	Մետաղական տարրերի տեղադրում	տ	5.946	50,0	297,3
24	75x75x8 մետաղական անկյունակի արժեքը	մ	567.84	3,5	1987,4
25	Շերտապողպատի արժեքը 60x80x260	կգ	0.82	0,4	0,3
26	Ծածկի բետոնացում B15 դասի բետոնով	մ^3	38.00	45,0	1710,0
27	Ամրան Acl	կգ	172.80	0,4	69,1
28	Ամրան 4Bp-I	կգ	520.00	0,5	260,0
Տանիք-Մասնաշենք Ա					
29	Ալիքավոր ազբոշիֆերե ծածկույթի քանդում ցվիքի և ջրհոս ճոռի հետ միասին	մ^2	510.0	7,0	510,0
30	Ձրատար խողովակների ապամոնտաժում	մ	35.00	0,2	7,0
31	Շին. աղբի բարձում և տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	5.00	6,0	30,0
32	Լրացուցիչ թեքանների և կանգնակների տեղադրում գոյություն ունեցող ծպեղնատրքերի տակ	մ	20.00	3,0	60,0
33	Գազաթի և լանջի թեքության փոխման երկայնքով տախտակամածի իրականացում	մ^2	45.00	4,0	180,0
34	Գոյություն ունեցող կավարամածի լրացում նոր փայտանյութով 25%	մ^2	445.00	1,0	445,0

35	Ծպեղնատոքերի մետաղական ձգանների ավելացում Φ6մմ	կգ	20.0	0,5	10,0
36	Լրացուցիչ ճարմադներ ծպեղնատոքերի, կանգնակների և մարդակների ամրացման համար Φ10մմ	կգ	15.0	0,5	7,5
37	Ջեղնահարկի փայտյա կոնստրուկցիա-ների հրապաշտպանություն	$մ^3$	11.00	5,0	55,0
38	Նույնը, կավարամածի և տախտակամածի համար	$մ^2$	490.0	0,1	49,0
39	Ցվիքի և ջրհոս ճոռերի պատրաստում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.	մ	97.00	4,0	338,0
40	Գագաթի հարթ ցինկ. թիթեղի իրականացում 0,55մմ հաստ.	$մ^2$	24.00	3,0	72,0
41	Վաքածև հարթ ցինկ. թիթեղի իրականացում 0,55մմ հաստ.	$մ^2$	41.40	3,0	124,2
42	Թիթեղյա ծածկույթի պատրաստում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով d=0,55մմ	$մ^2$	435.00	4,0	1740,0
43	Գոյություն ունեցող ձեղնալուսամուտների երեսապատում ցիկ. թիթեղով 0.55մմ	$մ^2$	6.80	3,0	20,4
44	Նույնի համար փայտե շերտափեղկ	$մ^2$	0.98	2,0	2,0
45	Նույնի յուղաներկում 2 անգամ	$մ^2$	0.98	1,0	1,0
46	Տանիքի ջրահեռացման խողովակների կառուցում d=0,55մ, Φ150մմ L=6.5մ	կ-տ	8.00	14,0	112,0
47	Տանիքի գոյություն ունեցող խարամի կուտակում	տ	51.60	2,0	103,2
48	Գոյություն ունեցող խարամի նորից փռում h=15սմ	$մ^3$	64.50	2,0	129,0
	Տանիք-Մասնաշենք Բ				
49	Ալիքավոր ազբոշիֆերե ծածկույթի քանդում ցվիքի և ջրհոս ճոռի հետ միասին	$մ^2$	510.0	1,0	510,0
50	Ձրատար խողովակների ապամոնտաժում	մ	35.00	0,2	7,0
51	Շին. աղբի բարձում և տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	5.00	6,0	30,0
52	Լրացուցիչ թեքանների և կանգնակների տեղադրում գոյություն ունեցող ծպեղնատոքերի տակ	մ	19.00	3,0	57,0
53	Գագաթի և լանջի թեքության փոխման երկայնքով տախտակամածի իրականացում	$մ^2$	55.00	4,0	220,0
54	Գոյություն ունեցող կավարամածի լրացում նոր փայտանյութով 25%	$մ^2$	445.00	1,0	445,0

55	Ծպեղնաոտքերի մետաղական ձգանների ավելացում Φ6մմ	կգ	20.0	0,5	10,0
56	Լրացուցիչ ճարմադներ ծպեղնաոտքերի, կանգնակների և մարդակների ամրացման համար Φ10մմ	կգ	15.0	0,5	7,5
57	Ջեղնահարկի փայտյա կոնստրուկցիա-ների հրապաշտպանություն	$մ^3$	11.00	5,0	55,0
58	Նույնը, կավարամածի համար	$մ^2$	500.0	0,1	50,0
59	Ցվիքի և ջրհոս ճոռերի պատրաստում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.	մ	90.00	4,0	360,0
60	Գագաթի հարթ ցինկ. թիթեղի իրականացում 0,55մմ հաստ.	$մ^2$	27.60	3,0	82-80
61	Վաքածև հարթ ցինկ. թիթեղի իրականացում 0,55մմ հաստ.	$մ^2$	45.60	3,0	136-80
62	Թիթեղյա ծածկույթի պատրաստում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով d=0,55մմ	$մ^2$	435.00	4,0	1740,0
63	Գոյություն ունեցող ձեղնալուսամուտների երեսապատում ցինկ. թիթեղով 0.55մմ	$մ^2$	6.800	3,0	20,4
64	Նույնի համար փայտե շերտափեղկ	$մ^2$	0.98	1,0	1,0
65	Նույնի յուղաներկում 2 անգամ	$մ^2$	0.98	1,0	1,0
66	Տանիքի ջրահեռացման խողովակների կառուցում d=0,55մ, Φ150մմ L=6.5մ	կ-տ	8.00	14,0	112,0
67	Տանիքի գոյություն ունեցող խարամի կուտակում	տ	51.60	2,0	103,2
68	Գոյություն ունեցող խարամի նորից փռում h=15սմ	$մ^3$	64.50	2,0	129,0
	Քանդման աշխատանքներ				
69	Փայտե դռների ապամոնտաժում	$մ^2$	143.00	1,0	143,0
70	Պատուհանների և պատուհանագոգերի ապամոնտաժում	$մ^2$	440.30	1,0	440,3
71	Կերամիկական հատակների քանդում	$մ^2$	74.70	1,0	74-7
72	Փայտե շրիշակների ապամոնտաժում	մ	833.00	0,1	83-3
73	Միջնորմների ապամոնտաժում b=0,2մ	$մ^3$	4.70	5,0	23-50
74	Պատերի սվաղի քանդում 10% չափով	$մ^2$	274.40	0,2	54-9

	քանդում 1,6մ բարձրության				
76	Սյուների գաջե սվաղի քանդում	մ^2	181.40	0,2	36-3
77	Պատերի հին ջրաէմուսիոն ներկի մաքրում	մ^2	1226.0	0,2	245,2
78	Պատերի յուղաներկի մաքրում	մ^2	1010.0	0,2	202,0
79	Առաստաղի գաջի սվաղի քանդում 5% չափով	մ^2	84.9	0,2	17,0
80	Առաստաղի հին ներկի մաքրում	մ^2	1612.400	0,2	322,5
81	Աստիճանների փայտե բռնածողերի քանդում	մ	18.20	0,1	3,6
82	Շին. աղբի բարձում և տեղափոխում 3կմ հեռավորության վրա	տն	143.90	6,0	863,4
	Դռներ				
83	Ալյումինե դռների տեղադրում ապակե փաթեթով, բացվող,սպիտակ	մ^2	13.00	60,0	780,0
84	Ներքին դռների տեղադրում (մետաղապլաստ), խուլ, բացվող, սպիտակ, թուրքական պրոֆիլ	մ^2	132.10	45,0	5944,5
	Պատուհաններ				
85	Պատուհանների տեղադրում (մետաղապլաստ), ապակե փաթեթով բացվող, սպիտակ,թուրքական պրոֆիլ	մ^2	160.50	38,0	6099,0
86	Նույնը, չբացվող	մ^2	280.00	28,0	7840,0
87	Պատուհանագոգերի տեղադրում 15սմ, ռուսական, խցանով	մ^2	30.40	30,0	912,0
88	Պատուհանագոգերի արժեքը 15սմ	մ	202.40		
	Հատակներ				
89	Հատակների տակ ցեմենտավազային հարթեցնող շերտի պատրաստում 30մմ հաստության	մ^2	919.70	2,0	1839,4
90	Գոյություն ունեցող փայտե հատակի հղկում	մ^2	777.90	1,5	1166,9
91	Նույնի երեսապատում տախտակով d=40մմ, շրիշակների հետ միասին	մ^2	777.90	6,0	4667,4
92	Տախտակե հատակների յուղաներկում 2 անգամ	մ^2	777.90	1,5	1166,9
93	Լամինատե հատակների պատրաստում 7մմ հաստության(շրիշակների և պարալոնի հետ միասին)	մ^2	541.0	6,0	3246,0
94	Միջանցքներում հատակների երեսապատում խեցե սալիկներով	մ^2	243.90		

95	Նույնի շրիշակների կառուցում խեցեսալիկներով (h=10սմ)	մ^2	26.10	6,0	156,6
96	Ասիճանավանդակների հարթակների հարթեցնող շերտի իրականացում	մ^2	59.00	2,0	118,0
97	Նույնի երկաթայնացում	մ^2	59.00	1,0	59,0
98	Սանհանգույցներում հատակների պատրաստում խեցեսալերով 33x33(Իրան)	մ^2	75.80	6,0	454,8
	Ներքին հարդարման աշխատանքներ				
99	Միջնորմների իրականացում 200մմ հաստ. պեմզաբլոկներով	մ^3	2.70	50,0	135,0
100	Սանհանգույցներում միջնորմների իրականացում միջնորմային սալերով (d=0,1մ h=1,6մ)	մ^2	14.10	5,0	70,5
101	Սյուների սվաղում գաջի շաղախով	մ^2	181.40	6,0	1088,4
102	Պատերի սվաղում գաջի շաղախով	մ^2	287.90	4,0	1151,6
103	Պատերի յուղաներկում 2 անգամ h=1,4մ	մ^2	1372.60	4,0	5490,4
104	Պատերի ներկում լատեքսով	մ^2	1378.00	4,0	5512,0
105	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ^2	243.40	3,0	730,2
106	Պատերի երեսապատում հախճասալով 20x30(Իրան)	մ^2	243.40	7,0	1763,8
107	Առաստաղների սվաղում գաջի շաղախով	մ^2	84.90	4,0	339,6
108	Առաստաղի ներկում լատեքսով	մ^2	1697.60	1,76	2993,2
109	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջի շաղախով	մ^2	95.100	3,0	285,3
110	Շեպերի ներկում լատեքսով	մ^2	95.10	2,0	190,2
111	Արտաքին շեպությունների սվաղ ց/ավազային շաղախով	գծմ	783.60	0,3	244,0
112	Աստիճանավանդակի ճաղաշարի փայտե բռնածողերի տեղադրում	մ	18.20	2,0	36,4
113	Աստիճանավանդակի ճաղաշարի յուղաներկում 2 անգամ	մ^2	13.10	1,0	13,1
114	Փակված բացվածքների և պատերի հավաքովի սալերի պոկված տուֆե սալիկների հատվածներումց/ ավազային	մ^2	87.00	1,0	87,0

115	Նույնի ներկում ճակատային ներկով	մ^2	87.0	1,0	87
	Նոր և գոյություն ունեցող միջնորմների ամրացում				
	Նոր կառուցվող միջնորմների ամրացում				
116	Միջնորմների անցքերի լցափակում թեթև բետոնով B7,5 դասի	մ^3	0.90	40,0	36,0
117	Մետաղական կապի ամրացում d=4մմ	տն	0.0378	500,0	18,9
118	Մետաղական ամրանների տեղադրում սեյսմիկ ամրացման համար	տ	0.0186	500	9,3
119	Ամրան Φ12A500c	տն	0.027	400,0	10,8
120	Դյուբել մետաղական կապերը ամրացնելու համար Φ4 L=60մմ	հատ	60.00	0,5	30,0
121	Միաձույլ ե/բետոնե բարավորների կառուցում B12,5 մակնիշի բետոնով	մ^3	0.90	60,0	54,0
122	Ամրան Φ6AcI դասի	տ	0.0213	400,0	8,5
123	Ամրան Φ12A500c դասի	տ	0.080	400,0	32,0
	Ա և Բ մասնաշենքների գոյություն ունեցող b=0,2մ միջնորմների ամրացում				
124	Մետաղական տարրերի տեղադրում	տն	0.2344	500,0	117,2
125	Մետաղաթիթեղ 4x80x105	տ	0.0844	500,0	42,2
126	Անկյունակ 50x5	տ	0.1500	500,0	75,0
	Մետաղական աստիճաններ-2 հատ				
127	Բետոնե հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	0.80	50,0	40,0
128	Մետաղական աստիճանի տեղադրում, բազրիքի հետ միասին	տ	0.933	50,0	46,8
129	Մետաղական շվելերի արժեքը 100x100x8	մ	28.4	3,0	85,2
130	Մետաղական անկյունակի արժեքը 50x50x5	մ	21.0	2,0	42,0
131	Մետաղական ուղղ. խողովակի արժեքը 50x30x2	մ	17.2	2,0	34,4
132	Մետաղական ուղղ. խողովակի արժեքը 15x15x1,5	մ	72.0	1,0	72,0
133	Ամրան Φ16 A500c	կգ	265.88	0,400	106,3

134	12x200x350, 4x950x1400 մետաղաթերթ	կգ	96.7	0,4	38,7
135	Աստիճանների յուղաներկում, բազրիքների հետ միասին 2 անգամ	մ^2	28.00	1,0	28,0
	Բարեկարգման աշխատանքներ				
136	Գոյություն ունեցող եզրաքարի քանդում	մ	37.50	1,0	37,5
137	Գոյություն ունեցող սալվածքի քանդում	մ^3	12.25	10,0	122,5
138	Գոյություն ունեցող բետոնե մասնակի աստիճանների քանդում	մ^3	2.00	10,0	20,0
139	Շին աղբի բարձում ավտոմեքենաների վրա, ձեռքով	մ^3	14.25	4,0	57,0
140	Գրունտի տեղափոխում տեղափոխում 5կմ	տն	27.79	2,0	55,6
141	Բետոնե աստիճանների կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	2.70	50,0	135,0
142	Աստիճանների երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ^2	11.70	15,0	175,5
143	Մայթերի խճային հիմքի իրականացում h=10սմ	մ^2	65.30	1,0	65,3
144	Ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստության	մ^2	65.30	8,0	523,4
145	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա	գ.մ	75.50	4,0	302,0
	Ամբողջը / մասի				
	II. Ներքին տնտեսական ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում Φ32(40x3,7)	մ	15.00	2,0	30,0
2	Պոլիպրոպիլենային խողովակ) Φ25(32x3)	մ	40.00	1,5	60,0
3	Պոլիպրոպիլենային խողովակ Φ20(25x2,3)	մ	18.00	1,0	18,0
4	Պոլիպրոպիլենային խողովակ Φ15(20x1,9)	մ	90.00	1,0	90,0
5	Փական Φ32	հատ	1.00	2,0	2,0
6	Նույնը Φ25	հատ	2.00	2,0	4,0
7	Նույնը, Φ20	հատ	2.00	1,5	3,0
8	Նույնը, Φ15	հատ	28.00	1,5	42,0

9	Լվացարանի ջրաբաշխիչ ծորակ	հատ	20.00	3,0	60,0
10	Ճկափող Φ10 L=400մմ	հատ	48.00	2,0	96,0
11	Համակարգի փորձարկում, լվացում և աղտահանում	մ	163.00	0,3	48,9
	Ընդամենը II մասի				
	III. Ներքին կոյուղի				
1	Պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակների մոնտաժում Φ=100	մ	60.00	1,5	90,0
2	Նույնը,պատի վրա Φ50	մ	48.00	1,0	48,0
3	Կերամիկական լվացարանակոնք սիֆոնով	լրակ	20.00	10,0	200,0
4	Ասիական թասակ, լվացման տակառով	լրակ	16.00	10,0	160,0
5	Կերամիկական զուգարանակոնքի տեղադրում	լրակ	4.00	20,0	80,0
6	Հոսակի տեղադրում d=50մմ	հատ	8.00	2,0	16,0
7	Միզամանի տեղադրում	հատ	8.00	2,0	16,0
8	Անցքերի բացում հիմքերում	1 անցք	2.00	2,0	4,0
9	Անցքերի բացում պատերում	1 անցք	16.00	2,0	32,0
10	Անցքերի բացում ծածկերում	1 անցք	8.00	2,0	16,0
11	Պլաստմասե ճևավոր մասեր՝	հատ	67.00	1,0	67,0
12	Եռաբաշխիկ ուղիղ 100x100, արժեքը	հատ	14.00	1,0	14,0
13	Եռաբաշխիկ ուղիղ 100x50, արժեքը	հատ	8.00	1,0	8,0
14	Եռաբաշխիկ ուղիղ 50x50, արժեքը	հատ	4.00	1,0	4,0
15	Ծունկ d=50մմ	հատ	13.00	1,0	13,0
16	Անցում	հատ	8.00	1,0	8,0
17	Թեքում Φ100 135^0	հատ	8.00	1,0	8,0
18	Թեքում Φ50 135^0	հատ	4.00	1,0	4,0

20	Համակարգի փորձարկում	մ	108.00	0,2	21,6
	Ընդամենը III մասի				
	IV. Էլեկտրական լուսավորություն				
1	Մուտքի վահան բաղկացած՝ մուտքի եռաֆազ ավտոմատից անջ. 200Ա(1 հատ), եռաֆազ ավտոմատներից անջ. 100Ա (6հատ)	հատ	1.00	200,0	200,0
2	Ուժային վահան բաղկացած՝ մուտքի եռաֆազ ավտոմատից անջ. 63Ա(1 հատ), եռաֆազ ավտոմատներից անջ. 25Ա (6 հատ)	հատ	4.00	25,0	100,0
3	Լուսավորության վահան պլաստմասե արկղ 10 ավտոմատնի համար կոմպլեկտավորվում է՝ մուտքի եռաֆազ ավտոմատ անջ. 50Ա(1 հատ), գծային ավտոմատ անջատիչ 16Ա (6 հատ)	հատ	4.00	20,0	80,0
4	Հաղորդալար ԿԿԹ 2x6մմ	մ	1210.00	0,4	484,0
5	Հաղորդալար ԿԿԹ 2x4մմ	մ	1360.00	0,3	408,0
6	Հաղորդալար ԿԿԹ 2x2.5մմ	մ	610.00	0,2	122,0
7	Հաղորդալար ԿԿԹ 2x1.5մմ	մ	975.00	0,15	146,3
8	Հաղորդալար ԿԿԹ 3x1.5մմ	մ	51.00	0,2	10,2
9	Կախովի առաստաղի լուսատու	հատ	20.00	5,0	100,0
10	Լուսատու պատին ամրացման 1 շիկացման լամպով	հատ	6.00	3,0	18,0
11	Առաստաղի լուսատու 1 շիկացման լամպով	հատ	67.00	3,0	201,0
12	Լուսատու 2 լյումինեսցենտային լամպով	հատ	118.00	5,0	590,0
13	Անջատիչ նորմալ տարբերակի, միաստեղ, թաքնված տեղադրման համար	հատ	35.00	1,0	35,0
14	Նույնը, երկստեղ	հատ	23.00	1,0	23,0
15	Երկբևեռ վարդակ	հատ	248.00	1,0	248,0
16	Տուփ ճյուղավորիչ	հատ	285.00	0,2	57,0
17	Մալուխ ԹՎթ 4ւ16	մ	132.00	2,0	264,0
18	Մալուխ ԹՎթ 4ւ25	մ	116.00	3,0	348,0
19	Վինպլաստե խողովակ Φ 20	մ	120.00	1,0	120,0
			60.00	5,0	300,0

21	Յուղային էլ. ջեռուցիչ սարք 2կՎտ	հատ	4.00	5,0	20,0
22	Յուղային էլ. ջեռուցիչ սարք 2,5կՎտ	հատ	9.00	5,0	45,0
Ապամոնտաժման աշխատանքներ					
1	Վահանակների ապամոնտաժում	հատ	5.00	1,0	5,0
2	էլ. շիկացման լամպով լուսատուների ապամոնտաժում	հատ	41.00	0,5	20,5
3	Անջատիչների, բաշխիչ տուփերի, վարդակների ապամոնտաժում	հատ	321.00	0,05	16,0
4	Անցքերի բացում առաստաղի մեջ d=50մմ	1 անցք	9.00	1,0	9,0
5	Անցքերի բացում պատերի մեջ d=50մմ	1 անցք	6.00	1,0	6,0
6	Խոռոչների բացում պատերում, վարդակների, անջատիչների և ճյուղավորիչ տուփերի համար	1 անցք	405.00	0,1	40,5
7	Թուջե ջեռուցիչ սարքերի ապամոնտաժում մինչև 80կգ	հատ	85.00	3,0	255,0
8	Ջրատար պողպատե խողովակների ապամոնտաժում Φ20փΦ108	մ	470.00	0,1	47,0
	Ընդամենը IV մասի				
	Ամբողջը I փIV մասերի			*81661,0*	
	Շահույթ - %			*4083,1*	
	Ընդամենը			*85744,1*	
	ԱԱՀ - 20%			*17148,8*	
	Ամբողջը			*102892,9*	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 .

Աշտարակիի ՏԳԲ

h/h 900441041226 ՀՎՀՀ 054004247

Ս. Սահակյան _____

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

« ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ

h/h 220043331127000 ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան_____

Կ.Տ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայտարարվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն

2011 թվականի մարտի 9-ին պատվիրատու՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան, որը գտնվում է Աշտարակ քաղաքի Վ.Պետրոսյան 4 հասցեում և կատարող « ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ -ի, որը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան Պ.Սևակի 11, մինչև կնքվել է << ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր>> (այսուհետև՝ պայմանագիր)։

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Արագածոտնի մարզի գ.Գեղաձորի 3-րդ աստիճանի վնասվածության դպրոցական շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացումը։

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **102 892 900 (մեկ հարյուր երկու միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ։

Գնումները կատարվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում ՀՀ կառավարության 03.02.2011թ. թիվ 108-Ն որոշմամբ <<Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու և Հայաստան Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> թիվ 108-Ն որոշումով նախատեսված օբյեկտների շինարարական աշխատանքները ձեռք բերելու նպատակով։

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի բանակցային ընթացակարգով առանց հայտարարության գնում կատարելու ձևով։

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի

ՖՍՏԶ վարչության պետ՝ Ն.Գալստյան

Հաստատում եմ Ս.Սահակյան

(պատվիրատուի ղեկավարի անունը ազգանունը)

(ստորագրություն)

"12" 05 20 11 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՆՄԱՆ-ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

1. Պատվիրատուի անվանումը ՀՀ Արագածոտնի մարզպետարան

2. Պայմանագրի (կցվում է) կնքման ամսաթիվը **12.05.2011**

3. Պայմանագրի ծածկագիրը՝ N ԱՄ- ԲԲԱՀ- ԱՇՁԲ - 11/05/01

4. Պայմանագրի գումարը **102 892 900 (մեկ հարյուր երկու միլիոն ութ հարյուր ինսուներկու հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ

5. Պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում կանխավճարի չափը **20 578 580 (քսան միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր ութսուն)** ՀՀ դրամը

6. Պայմանագրի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ կառ. 03.02.11թ. թիվ 108-Ն որոշում պահուստային ֆոնդ**

6.1 Պայմանագիրը պետական բյուջեից ֆինանսավորվելու դեպքում՝

Բաժին **11** Խումբ **01** Դաս **01** Ծրագիր **01**

7. Պատվիրատուին սպասարկող գանձապետարանի ստորաբաժանման կոդը 106002

8. Գնման ձևը (ընթացակարգ) բանակցային ընթացակարգ առանց հայտարարության /ԲԲԱՀ/

9. Պայմանագրի կատարման վերջնաժամկետը 30.11.2011թ.

10. Պայմանագիր կնքած անձի՝

10.1 անվանումը « ԵՍ ԵՎ ՆԱ»ՍՊԸ

10.2 հարկ վճարողի հաշվարկային հաշիվը 05204081

10.3 բանկային հաշիվը < Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >ՓԲԸ < Արագածոտն> Մ/Ճ հ/հ 22004333127000

1) Գնման գործընթացի մասին հաշվետվությունը հաստատվում է պատվիրատուի ղեկավարի կողմից, եթե այն կազմվում և ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում թղթային եղանակով: Հաշվետվությունը էլեկտրոնային եղանակով ներկայացվելու դեպքում այն չի հաստատվում պատվիրատուի ղեկավարի կողմից և դրա կազմման ու ներկայացման պահանջները սահմանվում են էլեկտրոնային եղանակով ներկայացվելու կանոններով:

2) պայմանագիրը չի կցվում, եթե՝
գնման առարկան ներառված է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի "Գնման գործընթացի կազմակերպման մասին" N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի 1-ից 4-րդ կետերում.
- *կնքված պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:*

3) 10.2 ենթակետը՝
- չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը.
- ֆիզիկական անձի դեպքում հարկ վճարողի հաշվարկային հաշվի փոխարեն նշվում է անձինագրի համարը և սերիան: